ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ

ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ Ա[illegible]ԱՌԱՔԵԼՅԱՆԻՆ

ԱՆՈՒՆ, ԱԶԳԱՆՈՒՆ Սայաթ Մարտիրոսյան

ՀԱՍՑԵ Նոր-Կյանք թաղ. 12

ՀԵՌ. 098-62-60-02.

# ԴԻՄՈՒՄ

Ինձ է պատկանում Կիա մակնիշի 35XC253 համարանիշով որը վթարվել է ձմռանը և չի շահագործվում երեք տարուց ավել:
Խնդրում եմ ազատել գույքահարկը իր գումարով հաշվից դուրս գրել:

29.10 2025 թ.
Օր ամիս տարի

Դիմող՝ [signature] (ստորագրություն)

Սայաթ Մարտիրոսյան (անուն, ազգանուն)

ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ «ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ»
ՄՈՒՏՔ 29 10 2025 թ.
ՀԱՄԱՐ N 16682

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱՔՆՆԻՉ ՎԱՐՉԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ

ք.Երևան, 0014, Թբիլիսյան խճուղի 3/9
հեռ. +(37410) 29-31-04
ԴԴԱ-4-Ե-5/0280/22
«24» հունիսի, 2024թ.

**Սայաթ Թաթևոսյանի ներկայացուցիչ՝ Զարուհի Վարդանյան**
**Հասցե՝ ք. Երևան, Մանթաշյան 26**

Սույն գրությամբ ուղարկվում է թիվ ՎԴ5/0280/05/22 վարչական գործով ՀՀ վերաքննիչ վարչական դատարանի «Վերաքննիչ բողոքը վարույթ ընդունելու մասին» 21.06.2024 թ. որոշումը:

Միաժամանակ պարզաբանվում է, որ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 138-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատավարության մասնակիցը վերաքննիչ բողոքը վարույթ ընդունելու մասին վերաքննիչ դատարանի որոշումը ստանալուց հետո իրավունք ունի ներկայացնելու վերաքննիչ բողոքի պատասխան՝ **տասնհինգօրյա** ժամկետում՝ գործն ըստ էության լուծող դատական ակտի դեմ բերված բողոքով:

Վերաքննիչ բողոքի պատասխանը ստորագրում է պատասխանը ներկայացրած անձը կամ նրա ներկայացուցիչը:

Վերաքննիչ վարչական դատարան ներկայացվող պատասխանին կցվում են պատասխանի պատճենները դատավարության մասնակիցներին ուղարկելու վերաբերյալ ապացույցները: Բացի այդ, եթե պատասխանը ներկայացրած անձը հանդես է գալիս ներկայացուցչի միջոցով, ապա կցվում է նաև լիազորագիրը կամ այլ փաստաթուղթ, որը հավաստում է ներկայացուցչի լիազորությունը:

Առդիր որոշումը՝ 3 թերթից:

ԴԱՏԱՎՈՐԻ ՕԳՆԱԿԱՆ ՆԵԼԼԻ ՎԱՐԴԱՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԵՐԱՔՆՆԻՉ ՎԱՐՉԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ

# ՈՐՈՇՈՒՄ
## ՎԵՐԱՔՆՆԻՉ ԲՈՂՈՔԸ ՎԱՐՈՒՅԹ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության
վարչական դատարանի վճիռ
նախագահող դատավոր Լ. Սաղոյան

Վարչական գործ թիվ ՎԴ5/0280/05/22

21 հունիսի 2024 թ.

ք. Երևան

Հայաստանի Հանրապետության վերաքննիչ վարչական դատարանը (այսուհետ նաև՝ Վերաքննիչ դատարան) հետևյալ կազմով՝

| | |
|---|---|
| նախագահող դատավոր | Կարեն Գևորգյան, |
| դատավոր | Արթուր Պողոսյան, |
| դատավոր | Գևորգ Սոսյան, |

քննարկելով ըստ հայցի Սայաթ Թաթևոսյանի ընդդեմ ՀՀ ոստիկանության, երրորդ անձ՝ Երևանի քաղաքապետարան՝ «ՀՀ Ոստիկանության կողմից 09.10.2019 թ., ժամը 00.40-ի սահմաններում, Երևան քաղաքի Հաղթանակ թաղամասի 4-րդ նրբանցքի վերջում /4 Ա տան դիմաց/ առկա ավտոմոբիլների երթևեկության համար նախատեսված հարթակին հարող երկաթգծից առաջ ՃԵԿ-ի Ձև հմ. 1-ի 1.33 «Այլ վտանգներ» ճանապարհային նախազգուշացնող նշանի տեղադրված չլինելը ոչ իրավաչափ ճանաչելու» պահանջի մասի թիվ ՎԴ5/0280/05/22 վարչական գործով ՀՀ վարչական դատարանի 05.02.2024 թ. վճռի դեմ ՀՀ ոստիկանության կողմից կրկին բերված վերաքննիչ բողոքը վարույթ ընդունելու հարցը,

### Պ Ա Ր Զ Ե Ց

Հայցվոր Սայաթ Թաթևոսյանը (ներկայացուցիչներ Ռուբեն Բալոյան և Զարուհի Վարդանյան) 23.11.2022 թ. հայցադիմում է ներկայացրել ՀՀ վարչական դատարան (այսուհետ նաև՝ Դատարան) ընդդեմ ՀՀ ոստիկանության՝ խնդրելով ոչ իրավաչափ ճանաչել ՀՀ ոստիկանության կողմից 09.10.2019 թ., ժամը 00.40-ի սահմաններում, Երևան քաղաքի Հաղթանակ

թաղամասի 4-րդ նրբանցքի վերջում (4 Ա տան դիմաց) առկա ավտոմոբիլների երթևեկության համար նախատեսված հարթակին հարող երկաթգծից առաջ ՃԵԿ-ի Ձև 1-ի 1.33 «Այլ վտանգներ» ճանապարհային նախազգուշացնող նշանի տեղադրված չլինելը:

Դատարանի 28.11.2022 թ. որոշմամբ հայցադիմումն ընդունվել է վարույթ:

Դատարանի 09.02.2023 թ. որոշմամբ գործը նշանակվել է դատաքննության:

Դատարանի 26.07.2023 թ. որոշմամբ դատավարության մեջ որպես երրորդ անձ ներգրավվել է Երևանի քաղաքապետարանը:

Դատարանի (դատավոր Լ. Սաղոյան) 05.02.2024 թ. վճռով Սայաթ Թաթևոսյանի հայցը բավարարվել է. ոչ իրավաչափ է ճանաչվել ՀՀ ոստիկանության կողմից 09.10.2019 թ., ժամը 00:40-ի սահմաններում, Երևան քաղաքի Հաղթանակ թաղամասի 4-րդ նրբանցքի վերջում (4 Ա տան դիմաց) առկա ավտոմոբիլների երթևեկության համար նախատեսված հարթակին հարող երկաթգծից առաջ ՃԵԿ-ի Ձև 1-ի 1.33 «Այլ վտանգներ» ճանապարհային նախազգուշացնող նշանի տեղադրված չլինելը:

Նշված վճռի դեմ ՀՀ ոստիկանությունը բերել է վերաքննիչ բողոք, որում ներառել է վերաքննիչ բողոք բերելու համար օրենքով սահմանված դատավարական ժամկետի բացթողումը հարգելի համարելու և պետական տուրքի վճարումը տարաժամկետելու վերաբերյալ միջնորդություններ:

Վերաքննիչ դատարանի (նախագահող դատավոր Կարեն Գևորգյան, դատավորներ Արթուր Պողոսյան և Գևորգ Սոսյան) 10.04.2024 թ. որոշմամբ ՀՀ ոստիկանության՝ բաց թողնված դատավարական ժամկետը հարգելի համարելու վերաբերյալ միջնորդությունը թողնվել առանց քննարկման, իսկ պետական տուրքի վճարումը տարաժամկետելու վերաբերյալ միջնորդությունը մերժվել է, և վերաքննիչ բողոքը վերադարձվել է:

Վերաքննիչ դատարանի «Պետական տուրքի վճարումը տարաժամկետելու վերաբերյալ միջնորդությունը մերժելու և վերաքննիչ բողոքը վերադարձնելու մասին» 10.04.2024 թ. որոշումն ստանալուց հետո՝ սահմանված ժամկետում, վերաքննիչ բողոքում առկա սխալները վերացվել են, և այն կրկին ներկայացվել է Վերաքննիչ դատարան:

Վերաքննիչ բողոքի ուսումնասիրության արդյունքում Վերաքննիչ դատարանն արձանագրում է, որ այն համապատասխանում է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 134-րդ հոդվածի պահանջներին և միևնույն ժամանակ բացակայում են նույն օրենսգրքի 136-րդ և 137-րդ հոդվածներով նախատեսված՝ վերաքննիչ բողոքը վերադարձնելու կամ վերաքննիչ բողոքի ընդունումը մերժելու հիմքերը:

Ըստ այդմ, Վերաքննիչ դատարանը գտնում է, որ վերաքննիչ բողոքը պետք է ընդունել վարույթ:

Վերոգրյալի հիման վրա և ղեկավարվելով ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 135-րդ հոդվածով՝ Վերաքննիչ դատարանը

## ՈՐՈՇԵՑ

1. Թիվ ՎԴ5/0280/05/22 վարչական գործով ՀՀ վարչական դատարանի 2024 թվականի փետրվարի 05-ի վճռի դեմ ՀՀ ոստիկանության կողմից կրկին բերված վերաքննիչ բողոքն ընդունել վարույթ:

Գործի դատաքննությունը նշանակել 2025 թվականի ապրիլի 02-ին, ժամը 10:00-ին ՀՀ վերաքննիչ վարչական դատարանի շենքում (ք. Երևան, Թբիլիսյան խճուղի 3/9, 2-րդ հարկ, դահլիճ թիվ 1):

Սույն որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից և ենթակա չէ բողոքարկման:

ՆԱԽԱԳԱՀՈՂ ԴԱՏԱՎՈՐ
ԿԱՐԵՆ ԳԵՎՈՐԳՅԱՆ

ԴԱՏԱՎՈՐ
ԱՐԹՈՒՐ ՂՈՂՈՍՅԱՆ

ԴԱՏԱՎՈՐ
ԳԵՎՈՐԳ ՄՈՍՅԱՆ